

տարուելէն ետքը, ձեմարանի պալատան գաւթին մէջ սրտաշարժ ճառ մը խօսեցաւ Գործան կիզծի ժողովարանի անդամոց դլուխն անցած :

Տէպի մարմինը չթաղեցին, այլ գերեզմանատան մէջ առանձին մատուռ մը դրեն, որուն զիմացը պատույ համար քաղաքը պահապան մը պիտի պահէ, մինչև որ լըննայ հոյա-

կապ շիրիմն որ կուղեն կանգնել իրեն համար :

Այսպէս Տէսպի մահն ընդհանուր Աւտորիոյ կայսերութեան և 'ի մասնաւորի Հունգարիոյ անմիմիթար սուդպատճառեց, Ալգունիք, ժողովարանք, ատենակազբ, զինուորականք, և ամենայն դասը ընկերութեան լացին այն սակաւագիւտ հայրենասիրին մահը :

ՃԻՆՈՅ Գ. Ա. Բ. Բ. Ո. Ն. Ի.

Մինչեւ քաղաքականացեալ աշխարհն իր միտքն ու սիրուն ամփոփեր էր Հունգարիոյ մայրաքաղաքն Բէշեմ, ու մօտանց կամ հեռուէն յուղարկաւոր Կըլլար անստորիտ հայրենասիրի մը թաղմանը, նոյն օրն (Յ փետրուար) ուրիշ պատուական և ըստ ամենայի ազնիւ կեանք մըն ալ կը կնքէր իր մահկանացուն՝ իտալիոյ մոտաւորական մայրաքաղաքն Փորբենտիա, ու կը փոխադրուէր 'ի հանգերձեալն, յետ ընդունելու լրանից ամէն օգնութիւնը և թոշակ. այն ինքն է արգոյ և պատկառելի ծերունին ձինոյ Գարբոնի, իտալական վերանորոգութեան մեծ աշխատաւորներէն մէկը, Քիչ մարդիկ իրեն նմոն ունեցեր են չտեսնուած պարծանքն՝ ըլլալու մշտնջենական առարկայ յարգանաց 'ի կողմանէ ամէն դասու հայրենակացաց. և յիրաւի քիչ մարդիկ ալ իրեն նման արժանաւորութիւն ունեցեր են այն յարգանաց, կենդանի ու խորին և ընդհանուր զգացմունք էր թէ ինքն է կատարեալ անձնաւորութիւն ափնուականութեան, անշահասիրութեան, մեծասրտութեան, և իրեն զիմացը կը խոնարհէին քաղաքագէտ մեծամեծ մարդիկ, ինչպէս իր հայրենաց մեծամեծ հանճարներն. և մի անգամ կատարերգութեան մը մէջ երբ իր խօսքն եղաւ անուանելով զինքն

աշանդական ազնուազդի (gentilissimo leggendario), բոլոր հանդիսատեսք ծափահարեցին, վասն զի այն խօսից մէջ գտան ամենուն ներքին զգացման արձագանգը:

Իրաւ ձինոյ Գարբոնի իտալիոյ մէջ նոյն աղղեցութիւնը չունեցաւ ինչ որ Փրանկիսկոս Տէպք ունեցաւ իր հայրենեաց բաղդին վրայ, սակայն անոր համապատիւ էր յարգանզը հայրենակցացը բոլոր կենացը մէջ, թէպէտև հեռի իրակոս իշխանութենէ. վասն զի կամ փոփէր յինքն վաեմախոն միտք, աղնուական զգացմունք և առատակեղ սիրոտ. որ երկար ժամանակ իրը լուսատու վարսու մը եղաւ. իր հայրենակցացը, առ որ կը դարձունէին իրենց աշքն՝ երկրայութեանց և յուսաբեկութեանց խաւարին մէջ :

Իրմով կը վերջանայ ձինոյ Գարբոնի պատմական անուանի ցեղն, որ հայրենեացը շատ վաստար անձինք տուերէ, որոնց մէջ ինքը կը փայլի և պիտի փայլի յապագայս աւելի պայծառ և աւելի յստակ լուսով :

Ձինոյ Գարբոնի ծներ էր 4 սեպտեմբերի 1792. բոլոր իտալիա, բովանդակ քաղաքակիրթ և իմաստունն Եվրոպա կը ճանշանային ու կը յարգէին զինքն : Մեծ սիրով և անդուր աշխատաւթեամբ կը մշակէր զգարութիւնս, որուն վկայ է



ՃԻՆՈՑ ԳԱԲԲՈՆԻ

երկասիրութիւնն Պատմորիշն Հա-
սարակապեսուրքեան Փլորենսիոյ ,
զոր վերջերս տուաւ 'ի լցոս , և անմահ
արձան կանգնեց իր անուանը :

Ճինոյ Գաբրոնի այս մեծ արդիւնքն
աւ ունեցաւ որ ամենայն զօրութեամբ
աշխատեցաւ հանել հայրենիքը ծառա-
յութենէն և վերբերել զայն յազառու-
թիւն՝ քրիստոնէական կրթութեամբ,
բարի օրինակաւ , և այն ամէն առաքի-
նութեամբք որով կը մեծանան աղջք ,
կը զարգանան ազատութեամբ և ար-
ժանաւոր կ'ըլլան վայելելու զայն :

Մեռաւ քրիստոնէաբար ինչպէս որ
ապրեր էր , վասն զի ինքը ոչ երբէք բաժ-
նեց կրօնքն ազատութենէ ու հայրենա-
սիրութենէ : Եւ այսպիսի անգիւտ մար-
դու մը մահը մէկ պայմանաւ միայն

կարելի է զարմանել , եթէ ըլլան շատեր
որոնք զիսնան ապրիլ ու դործել իրեն
նման :

Յուղարկաւորութիւնը կատարուե-
ցաւ 'ի Փլորենտիա շատ շքեղ , և արժա-
նի այնպիսի անձի մը որուն առաքինու-
թիւնքն ու գիտութիւնը պէտք է յար-
գել : Եկեղեցին , արքունիք , ժողովա-
րանք , նախարարք , ատենակալք , ծո-
վային ու ցամաքային զինուորութիւնք ,
ակադեմիայք , ուսումնական կանառք ,
հոգեւոր եղբայրութիւնք և ամենայն
դասք հայրենակցացն , ինչպէս նաև օ-
տարք , յուղարկաւոր եղան իրեն մինչև
հանգստեան տեղին . բայց մահուան ե-
րեսներորդ օրը ալ աւելի մեծահանդէս
պաշտօն պատարագ մատուցուեցաւ հո-
գւոյն համար :